

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18.907

ԱԼԱԶԱՆ

4 ՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ՊԱՇՏՊԱՆՏԻՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՂԳՐԵՍԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

27.3
—
2.28

ԲԱՑ Օ 1935

27 SEP 2006

15 JAN 201

7.3 ԱԼԱԶԱՆ

728

4

ՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պ ԵՑԷՐՍ 0 1985



01. 2013

18907

Սրբագրեց՝ Ո. Գառարջան
Գլավիտ 263, պատվեր 969
Հրատ. 3405, տիրոժ 1000
Պետերատի տպարան



24184-59

Պ Ր Ո Լ Ե Տ Ա Ր Ա Կ Ա Ն
Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ց Ի Ո Ն Ա Լ Ի Չ Մ Ի
Ո Ի Ղ Ի Ն Ե Ր Ո Վ

Զեկուցում կուլտուրայի պաշտպանության
փառիցի միջազգային կոնգրեստի

Գրչի ու դործի բարեկամներ·
Յես ձեզ ջերմագին յեղբայրական
վողջուն եմ բերել այն հեռավոր յեր
կրկց, ուր յեռում ե սոցիալիստական
աշխատանքը, ուր դարերով կաշկանդ
ված ժողովրդական ստեղծադործա-
կան հանճարը նոր թափ ու թռիչք
ե առել, ուր ապրում ե յերջանկու-
թյունը, ուր հաղթականորեն քայ-
լում ե նոր կյանքը, ուր ամենաբար-
ձր տեմպով աճում ե մարդկային սե-
լունդը, ուր արչալույսի պես պայ-
ծառ մանուկները լցրել են մեր քա-
յաքներն ու դյուղերը, վողողել են
կյանքը, հաղթականորեն քայլում են
դեպի ապագան:

Յես ձեզ վողջուն եմ բերել այն
յերկրկց, վորի հորիզոնի անապական
լազուրը պատռելով վեր են խոյանում

Արարատի հավիտենական սառը գա-
գաթները, վորի լեռները բարձր պա-
հած որորում են Սևանի մութ կա-
պույտ ջրերը, վորի ձորերի հավի-
տենական մշուշը փարատում են սո-
ցիալիստական էլեկտրակայանների
հզոր լուսարձակները (ծափեր) :

Յես ձեզ վողջույն եմ բերել Սոցիա-
լիստական Խորհրդային Հայաստա-
նից, նրա աշխատասեր ժողովրդից,
վորը խորհրդային իշխանության
պայմաններում հրաշքներ ե գոր-
ծում, նրա կուլտուրայի անխոնջ մը
չակներից, նրա արվեստագետներից
ու գրողներից, վորոնք ինձ ուղար-
կել են մասնակցելու ներկա պատմա-
կան կոնգրեսին :

Հայ գրականութունն ունի այլեկի
քան 15 դարի հարուստ անցյալ : Նրա
միջնադարյան յերկնակածարում շող-
ջողում են այնպիսի աստղեր, վորպի
սիք են Գրիգոր Նարեկացիին և Ներ-
սես Շնորհալիին, վորոնց 18-րդ դա-
րում միջանայու յե գալիս Հայ մեծա
դույն աշուղ Սայաթ Նովան, վորի

հանճարի ծաղիկները թարմ և անմեռ
են դեռ մինչև այսօր :

Ծանր ե յեղել Հայ գրականության
ձակատագիրը, մինչև Հոկտեմբեր-
յան հեղափոխության հաղթանակը
Հայաստանում :

Ծնորձիվ Ֆեոդալական, կապիտա-
լիստական անտանելի պայմանների,
ժողովուրդների քանտ ցարական
Ռուսաստանում և սուլթանական
Թուրքիայում անասելի հալածանքի
եր յենթարկվում փոքր ժողովուրդ-
ների, վորոնց թվում նաև Հայերի
կուլտուրան ու գրականությունը :
Փակվում եյին դպրոցները, թերթե-
րը, հալածվում եյին գրականության
և կուլտուրայի մշակները, կամ
մատնվում սովամահության : Այսպես
որինակ՝ ցարական Ռուսաստանում
«անհետ կորավ» մեծ վիպասան և
մտածող Խաչատուր Արովյանը : Իր
առաջագիմական հայացքների համար
Պետրոպավլովյան բանտում յերկար
տառապեց և կամիչինի աքսորավայ-
րում իր մահկանացուն կնքեց հասա-
րակական խոշոր գործիչ, բանաս-
տեղծ, Բակունինի համախոհ ու բա-

րեկամ Միքայել Նալբանդյանը: Սուր
թանահան թուրքիայում քաղցի ճի-
րաններում մահացավ հանձարեղ յեր
դիծաբան Պարոնյանը: Ծայր աստի-
ճան աղքատութեան մեջ 20 տարեկան
հասակում թողարկուից վախճանվեց
հայ մեծագուշն լիբիկ՝ Պետրոս Դուր
յանը: Իսկ համաշխարհային արյու-
նոտ պատերազմի սարսափներին զոհ
գնացին տասնյակներով հայ գրողներ
և արվեստագետներ:

Այս պայմաններում բնավ պատա-
հական չպիտի համարել այն հանգա
մանքը, վոր հատկապես 19-րդ դարի
և 20-րդ դարի առաջին քառորդի հայ
գրականութեան հիմնական մտտիվը
յեղել է վողբը, վիշտը: Հայ բուր-
ժուգիան հրահրել է աղգայնական
ատելութուն ու վրեժ: Պատահա-
կանութունն չէ, վոր 19-րդ դարի հայ
գրականութունն սկսում է Աբովյա-
նի «Վերք Հայաստանի, վողբ Հայ-
րենասերի» նշանավոր վեպով:

Չնայած այս միանգամայն անը-
պաստ պայմաններին, հայ ժողովուրդ
դը կարողացել է 19-րդ դարում և

20-րդ դարի առաջին քառորդում
տալ մի շարք նշանավոր ստեղծա-
գործողներ, վորոնց արժեքներին իս-
կական գնահատումը կատարվում է
միայն հոբիդային իշխանութեան
պայմաններում: Հիշենք թեկուզ Ա-
բովյանին, Պարոնյանին, Թումանյա-
նին, Սունդուկյանին, Շիրվանզադե-
յին, Նալբանդյանին, Իսահակյանին,
Հակոբ Հակոբյանին, Վ. Տերյանին,
Նար-Դոսին, Դուրջանին, Մեծաբեն-
ցին և ուրիշներին:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխու-
թեան արեգակով միայն բացվեց հայ
ժողովրդի, ինչպես և նրա կուլտու-
րայի ու գրականութեան վերածնու-
թեան արգասավոր արշալույսը:

Հոկտեմբերյան հեղափոխութեան
փրկարար սուրբ ընդմիջտ կորեց հայ
քնարից լացի ու մորմոքի լարերը:
Թախծի դարավոր ամպը՝ հոկտեմ-
բերյան մորիկներից հալածական՝
ընդմիջտ չքացավ հայ գրականու-
թեան յերկնքից: Ստեղծվեց իր վո-
րակով բողբոլիին նոր, կենսախինդ,
պայծառ հեռանկարներով, բազմա-

կողմանի թեմատիկայով, միջազգայնական դադափարներով հարուստ մի գրականութուն, Հայաստանի խորհրդային գրականութունը, վորն այս պատկառելի կոնգրեսին ներկայացնելու պատիվն ինձ է վիճակված:

Յեթե անցյալում, մինչև սոցիալիստական կարգերի հաստատումը Հայաստանում, հայ գրողը կամ հասարակական գործիչը միջազգային ամբիոն ստանալու պատվին եր արժանանում, նա լայահառաջ կուրծք եր ծեծում «մեծ պետութունների» կարեկցությունը և դուրը հայցելու միտումով, նա վողբում եր հայ ժողովրդի խեղճությունը, նրա դառը վիճակը, նա ուշադրութուն եր հըրավիրում կործանված յերկրի, ավերված դյուղերի, տանյակ հազարավոր վորբերի վրա:

Այսոր յես այս պատասխանատու ամբիոնից ի լուր ամբողջ աշխարհի հպարտությամբ հայտարարում եմ, վոր Խորհրդային Հայաստանը, մեծ Միության անբաժանելի մասնիկը, հայ ժողովրդի հայրենիքը, վոչ վոճի

կարեկցությանը պետք չունի: Այնտեղ ուտար ե վողբը, այնտեղ վորբեր չկան այչևս, յերբեմնի ավերակ յերկրի փոխարեն բարձրանում եմ նոր քաղաքներ ու ավաններ: Հայրենի ձորերի դարավոր խավարը պատուում են վիթխարի ելեկտրոկայանները: Սոցիալիստական դյուղատնտեսութունը հիմնովին վերափոխել ե Հայաստանի հետամնաց դյուղը: Անգրադիտության ծանր բեռի տակ տնքացող Հայաստանը դարձել ե համատարած գրադիտության յերկիր:

Հեղափոխության հենց առաջին որից հայ մտավորականության խոշորագույն և աղնիվ ներկայացուցիչները վողջունեցին պրոլետարական հեղափոխությունը և յեկան աշխատելու նրա փրկարար դրոշի ներքո: Հեղափոխության հենց առաջին որբերին հայ մեծագույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, մեր պոեզիայի ամենախոշոր դեմքը, Հայաստանի Հեղկոմին գրած իր նամակով վողջունեց խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում:

իր կյանքի վերջին տարիները նա նվիրեց խորհրդային Հայաստանի շինարարութեան գործին: Նույն պատվաւոր ուղին ընտրեցին նաև այնպիսի մեծ ստեղծագործողներ, վարպետիք են Ալ. Երվանդադեան, Ավ. Իսահակյանը, ինչպես նաև արեւմտահայ նշանավոր գրողուհի Զապել Յեսայանը և բազմաթիւ ուրիշներ:

Նույն այս դուռը մենք տեսնում ենք նաև արվեստի և գիտութեան այլ և այլ բնագավառներում: Թե կերպարավեստի, թե յերաժշտութեան, թե թատրոնի, թե ճարտարապետութեան, թե գիտութեան ասպարեզում աշխատող բոլոր նշանավոր ստեղծագործողներն ու վարպետները վողջունեցին Հոկտեմբերյան հեղափոխութեանը և այժմ մեծ յեռանդով ու ազնվութեամբ աշխատում են մեր սոցիալիստական կուլտուրայի ճակատում: Բավական է նշել այնպիսի նշանավոր անուններ, վարպետիք են Մ. Մարյանը, Փ. Թերլեմեզյանը Ալ. Թամանյանը, Հ. Անաոյա

նը, Մ. Արեղյանը և տասնյակ ուրիշներ:

Հեղափոխութեանից առաջ գրական վարպետներն իստակած մի խումբ գրողներ հեղափոխութեանից հետո խորհրդային իշխանութեան ստեղծած միանգամայն նպաստավոր և հոգատար պայմաններին շնորհիվ դարգացան և ձեւակերպւեցին վարպետ իսկական խորհրդային գրողներ, արտագերելով իրենց արժեքավոր յերկիրը վերջին տասնամյակի ընթացքում:

Հայաստանի խորհրդայնացումը, սակայն, հրապարակ նետեց գրողներին մի ամբողջ հույս, վորը վարդարեց մեր գրականութեան պայծառ յերկնակամարը: Այդ գրողները հանդիսացան հեղափոխութեան բերած նոր դարձումների, նրա ստեղծած նոր հարաբերութեաններին յերգիչները, նրանք խորտակեցին հայ գրականութեան նեղ, ինքնամիտ սահմանները, նրանք դուրս յեկան հայ կական սահմանափակւածութեանից: Նրանց ընարը վորոտաց համա-

մարդկային բարձր դադախարներով,
Նրանց յերգերում հնչեց ուստական
մեծ պրոլետարիատի հերոսական
պայքարն ու Հոկտեմբերյան հաղ-
թանակը, ճնշված ժողովուրդների
ազատագրման սրբազան յերգը:

Ենորհիվ Սորհրդային Միության
մեջ փոքր ժողովուրդներին ցույց
արվող բացառիկ հոգատար վերա-
բերմունքի, մեր գրականության բո-
լոր արժեքավոր գործերն անմիջա-
պես թարգմանվում են ուսերենի և
հրատարակվում ուստական հեղինա-
կավոր հրատարակչությունների կող-
մից:

Այսպիսով մեր գրականության
յուրաքանչյուր արժեքն ու նվաճումն
անմիջապես դառնում են 170 միլիո-
նանոց մեծ ժողովուրդի սեփականու-
թյունը: Մի միլիոնանոց հայ ժողո-
վրդի գրողը դառնում է 170 միլիո-
նի գրող, արժանանում է 170 միլիո-
նի ջերմ խրախուսական վերաբեր-
մունքին:

Հայաստանի հորհրդային գրակա-
նությունը փոքր ժողովրդի, բայց

մեծ գաղափարների գրականությու-
ն է (բուռն ծափեր): Նա իր հիմնում
ունի այդ ժողովրդի ստեղծած բազ-
մադարյան հարուստ կուլտուրան,
վարի բոլոր լավագույն արժեքների
միակ տերն ու ժառանգը հայ աշխա-
տավորությունն է: Նա հորհրդային
Միության մեծ գրականության ար-
գանական մասն է. կազմում: Նրա
մշակները գործոն կերպով պայքա-
րում են սոցիալիստական հանրակար-
գի վերջնական հաղթանակի համար,
աշխատավոր մարդկության վերջնա-
կան ազատագրման համար: Նրանք
պայքարում են համաշխարհային
կուլտուրայի բոլոր լավագույն ար-
ժեքների պաշտպանության գիրքե-
րում: Նրանք վեր են բարձրացնում
իր հայրենիքում խորտակված Հան-
րիս Հայնեյի արձանը (բուռն ծա-
փեր): Նրանք Փաշիստական խա-
րույկներէջ դուրս են կորզում մարդ-
կային առաջավոր մտքի ստեղծած
բոլոր հոյակապ արժեքները (ծա-
փեր):

Հայաստանի խորհրդային գրակա-
նությունը պայքարում է հայ ժողո-

վըրդի թշնամիների դեմ, յերկրից
վտարված հայ Փաշխտների— դաշ-
նակցականների դեմ, վորոնք միա-
ցած համաշխարհային ամենասե-
ուժերին՝ կամենում են վտանգել թոր
հրդային միության, խորհրդային
Հայաստանի սոցիալիստական խա-
ղաղ աշխատանքը:

Նա պայքարում է ազգայնական,
ոտարատյաց դադափարների դեմ:
Նա բարեկամ է, սիրում է պաշտպա-
նում է բոլոր ազգերի առաջավոր դը-
րողներին ու մտավորականներին, վո-
րոնք պայքարում են մարդկության
բարրության համար:

Նա առաջ է մղում իր սոցիալիս-
տական հայրենիքի բարդավաճման
մեծ դադափարը: Նա ջերմորեն է
յեղբայրաբար ձեռք է կառկառում
այն բոլոր ազնիվ մտավորականներին
և գրողներին, վորոնք արիաբար պայ-
քարում են հանուն ճշմարտության,
հանուն կուլտուրայի պաշտպանու-
թյան, պատերազմի սև ուրվականի
դեմ, Փաշիզմի դեմ (բուռն, յերկա-
րատե ծափեր):

8
24184-59

Կ ՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԿՈՆԳՐԵՍԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Զեկուցում, կարգաված 1935 թ.
հուլիսի 23-ին Ցերևանում և ոգոս-
տոսի 1-ին կենինականում:



I

Մ Ի Ա Յ Յ Ա Լ Ճ Ա Վ Ս Տ Ո Վ
Ը Ն Դ Դ Ե Մ Ֆ Ա Շ Ի Չ Մ Ի

Ը ն կ եր ն ե ' ր .

Սրանից յերեք տարի առաջ, պրո-
լետարական մեծանուն գրող Ալեքսեյ
Մաքսիմովիչ Գորկին, - պատասխա-
նելով ամերիկյան թղթակիցներին,
ի լուր ամբողջ աշխարհի հռչակեց
իր մարտական կոչը - «Ու՞մ հետ եմ
դուք, «կոլտուրայի վարպետներ»:
Արձանագրելով կապիտալիզմի կող-
մից մարդկային առաջավոր կոլտու-
րան վոչնչացնելու բազմաթիվ փաս-
տեր, պատռելով բուրժուական հու-
մանիզմի խաբուսիկ վարազույրը,

վորի հետեւում «մարդը մարդուն զայլ ե»,—Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին, խիզախ ու առնական կերպով նայելով կապիտալիստական աշխարհի կուլտուրայի վարպետներին աչքերի մեջ, հարցնում էր նրանց.—

«Դուք ձեզ կարող եք համարում ծառայելու մարդկային կուլտուրային» և «պարտավոր պաշտպանելու այն բարբարոսութեան հասնելուց»: Այդ շատ լավ է: Բայց ձեր առաջ դրեք մի պարզ հարց. ի՞նչ կարող եք անել դուք այսօր և վաղն այդ կուլտուրան պաշտպանելու համար: Ահա այսպես. հարցրեք ինքներդ ձեզ, ի՞նչ կարող եք դուք հակա դրեւ կուլտուրան քայքայող գործադրկութեան փաստին, բանվոր դասակարգի սովի միջոցով քայքայմանը, մանկական պրոնկութեան աճմանը: Արդե՞ք ձեզ համար հասկանալի՞ յե, վոր մասսաների հյուժումը նշանակում է հյուժումն այն հողի, վորի վրա աճում է կուլտուրան»:

Գունեզ փաստերով՝ մի կողմից կապիտալիստական մեռնող աշխարհի և մյուս կողմից՝ սոցիալիզմի հայրենիքի կուլտուրական վիթխարի վերելքի պատկերը դժեւուց հետո, Ալեքսեյ Մաքսիմովիչն իր այդ նույն կոչում շարունակում է.—

«...Ժամանակն է, վոր դուք վրճուք նաև մի պարզ հարց. ո՞ւմ հետ եք դուք, «կուլտուրայի վարպետներ», կուլտուրայի սև մշակները՝ հետ՝ կյանքի նոր ձևեր ստեղծելու համար, թե՞ դուք այդ ուժի դեմ եք՝ պահպանելու անպատասխանատու գիշատիչների կաստաները, կաստաներ՝ վորոնք գլխից փտել են արդեն և շարունակում են գործել միայն ինքնրցիայով»:

Պետք է արձանագրել, վոր կապիտալիստական հարատևող կրիդիսների, Ֆաշիզմի գիշատիչ տիրակալութեան պայմաններում, Գորկու այս բողաւառ կոչը քիչ դեր չխաղաց կապիտալիստական աշխարհի «կուլտուրայի վարպետներին» շատ և շատ ներ

կայացուցիչները կողմնորոշման և ճախացման մեջ:

Յեւ ահա, այդ կոչի հռչակումից յերեք տարի հետո, կուլտուրայի վարպետների առաջավոր ներկայացուցիչներն անհրաժեշտ համարեցին գուժարեւ իրենց միջադրային պատմական առաջին կոնգրեսը, քննելու համար կուլտուրայի պաշտպանութեան հրամայական խնդիրը:

Առաջին և անուղղակի պատասխանը, վոր տվին կոնգրեսում հալաքված 38 յերկրների կուլտուրայի վարպետները Ա. Մ. Գորկու կոչին, այդ այն էր վոր նրանք կոմունիզմի հետ են, բնդդեմ մեռնող կապիտալիզմի, բնդդեմ գազագած փաշիզմի:

Կոնգրեսում, տկարութեան պատճառով չկար Գորկին, չկար նաև Ռոմեն Ռոլանը: Մակայն նրանց անունը հաղթական դրոշակի պես ծածանվում էր կոնգրեսի վրա, և այդ էր պատճառը, վոր կոնգրեսն իր վողջույնի առաջին խանդավառ խոսքերն ուղղեց ժամանակակից դրականութեան այդ յերկու բողաշունչ վարպետներին,

կուլտուրայի պաշտպանութեան համար, Փաշիզմի դեմ մղվող պայքարի այդ յերկու խիզախ մարտիկներին:

Բուրժուական կենտրոնական մամուլը նախ փորձեց անտեսել կոնգրեսի աշխատանքները, լռել այդ մասին, ասլա տեսնելով, վոր այդ անհնար է, ստիպված յեղավ խոստովանել կոնգրեսի մեծ դերն ու նշանակութունը:

Ռեակցիոն մամուլը սկսեց ամեն կերպ վարկաբեկել կոնգրեսը և հատկապես նրա կարկառուն ղեկավարներին:

Յես չեմ ուզում ձեր ուշադրութունը հրավիրել ռեակցիոն մամուլի զգվելի մեջբերումների վրա, վորը ձգտում էր մինչեւ անգամ անձնական վիրավորանք հասցնել կուլտուրայի մեծ վարպետներին: Ավելորդ չեմ համարում արձանագրել, վոր սպիտակ զվարդիական մամուլը («Возрождение», «Последние Новости») բնավ հետ չմնաց վարկաբեկելու խորհրդային պատգամավորութեանը, իսկ դաշնակցական «Հա-

ուաջն» իր պարտականութիւնն համարեց կաղկանձել խորհրդային Հայաստանի պատգամավորի վրա :

Հենց կոնգրեսի անունն ինքնին չափազանց հատկանշական և բնորոշ է : «Կուլտուրայի պաշտպանութեան կոնգրես» — ուրեմն կապիտալիստական աշխարհում բանն այնտեղ է հասել, ի՞նչ անաշխարհ, ազնիվ մտավորականներն սկսում են անհանգստանալ և լրջորեն մտածել կուլտուրայի պաշտպանութեան ու փրկութեան համար, կուլտուրայի, վորին սպառնում է Փաշխտական ինկվիզիցիայի բարբարոս հուրն ու արյունոտ կացիւնը :

Խորտակվող կապիտալիզմի «փլուկութեան» միսիայով հրապարակ նետ ված Փաշիզմը գնալով ավելի սանձարձակ է դառնում : «Զարմանալի չէ, — ասում է ընկ. ՄՏՍԱԻՆԸ մեր կուսակցութեան 17-րդ համագումարում, — վոր Փաշիզմը հիմա ամենից մոռային ապրանքն է բուրժուական ուղղատեսնչ քաղաքագետների շրջանում : Յես խոսում եմ վոչ միայն Փաշիզմի

մասին ընդհանրապես, այլ ամենից սուղ գերմանական տիպի Փաշիզմի մասին, վորը սխալ կերպով է նացիոնալ-սոցիալիզմ կոչվում, վորովհետև յեթե ամենամանրագնին կերպով իսկ դիտելու լինենք, նրա մեջ անհնար է հայտնաբերել սոցիալիզմի նույնիսկ մի ատոմ» :

Յեվ ահավասիկ գերմանական տիպի, հիտլերյան տիպի այդ Փաշիզմն է, վոր վորպես բարբարոսութեան առաջամարտիկ, իր ձեռքը վերցնելով կուլտուրայի վրա արչավելու դրոշը, սկսել է լուրջ մտահոգութիւն պատճառել կուլտուրայի բոլոր ազնիվ վարպետներին : Բերլինի փողոցներում մարդկային առաջավոր մտքի բոլոր դանձերի հրկիզման ցնցող տեսարանը չէր կարող չսթափեցնել կապիտալիստական յերկրները շատ և շատ մտավորականներին, «վորոնց աշխատանքը շարունակ պատվում էր բուրժուազիայի կենցաղը զարդարելու, հարուստների տաղտուկ կյանքը մխիթարելու շուրջը» (Գորկի) : Յեվ մենք վերջին տարիներս ականատես

ենք լինում այն փաստին, թե ինչպես Փաշիստական ինկվիզիցիայի սաստկացմանը զուգընթաց, կապիտալիստական ահռելի կրիզիսի խորացման պայմաններում, ավելի և ավելի խորանում է բեկումը բուրժուական և մանր-բուրժուական մտավորականության շրջանում: Նրանք, այդ մտավորականության առաջավորները, պարզ կերպով տեսնում են թե ղեպի ո՛ւր է գնում կապիտալիստական սիստեմը, նրանք տեսնում են Փաշիզմի սև ուրվականի սպառնալի գեմը: Նրանք տեսնում են թե ինչպես հիտլերյան Գերմանիայում դարձնազույն գրոհայինի մի կաթիլ արիական արյունը շատ ավելի թանգ է զնահատվում քան հանձարեղ Հայնիշի գրական վողջ ժառանգությունը: Յեվ վերջապես նրանք տեսնում են «վոր Յեվրոպայում և ալիսարհի ամեն մասում գրողը, վորի համար թանգ են կուլտուրայի բազմադարյան նվաճումները և վորը տեսնում է, ինչպես կապիտալիստական բուրժուազիայի աչքում կուլտուրայի այդ նվաճումները

կորցնում են իրենց զինը և մի «դեղեցիկ» որ յուրաքանչյուր աղնիվ գրագետի դերքը կարող է հրապարակային այրման յենթարկվել» (Գորկի): Նրանք, այդ բուրժուական և մանր բուրժուական մտավորականներից շատ-շատերը տեսնում են թե կապիտալիստական սիստեմի պայմաններում ինչպես է սահմանափակվում և սանձահարվում գիտությունն ու արվեստը: Սրանից մի յերկու տարի առաջ Ֆրանսիական միջիստր կայուն բաց է բաց հայտարարեց վոր «մարդիկ պետք է սանձահարեն գիտությունը: Ժամանակակից կրիզիսը, շարունակում է կայուն, մարդկային բանականության պարտությունն է: Գիտություն համար յերբեմն չկա արվելի մեծ դժբախտություն, քան մեծ մարդը»:

Յեվ իսկապես, Յեվրոպայում մենք մեր աչքով տեսանք թե ինչպես մեռնող կապիտալիզմի համար մեծ մարդիկ և նրանց ստեղծած մեծ կուլտուրան արդեն ավելորդ, վտանգավոր են դառնում: Մենք տեսանք թե ինչ-

պէս բուրժուական բեմերից վտարվում են մեծանուն կլասիկները, վորոնց փոխարինելու յեն գալիս ասենք «Կազինո դը Պարիզ» տասնյակ և հարյուրավոր մերկ պարուհիները, վորոնք իրենց մարմինների պոռնոգրաֆիական ժեստերով գծում են բուրժուական արվեստի մայրամուտը:

Ընկերներ:

Բեռլինում յեղած կարճ ժամանակ վա ընթացքում, յես և ինձ հետ մեր պատգամավորութեան մի մասը, ականատես յեղանք միլիտարիզմի այն ահռելի պրոպագանդին, պատերազմի այն տենդազին պատրաստութեանը, վորով ապրում ու շնչում եր Ֆաշիստական Բեռլինը: Մենք ամեն քայլափոխին տեսանք վերահաս պատերազմի մոլի ազդեցութեան: Մենք տեսանք հիտլերյան մանուկներին և պատանիներին, ռազմական հանդերձավորման մեջ: Մենք տեսանք 10-12 տարեկան մանուկների, վորոնց կողքին կախված փոքրիկ սրբի դաստակների վրա գոթական տառերով փորագրված եր- «Արյուն և պա-

տիվ»: Մենք տեսանք բանվորական թաղամասերի մեռելային ամայութեանը և բուրժուական թաղամասերի միլիտարիստական տազնապը: Մենք տեղեկացանք այն մասին թե ինչպէս գեղարվեստական գրականութեանը մի կողմ ե չարտփում: Հիտլերը քարոզում ե թե յերիտասարդութեանը ծարավի յե արջան ու կրակոցի, նրան հարկավոր չեն գեղարվեստական գրքերը, նրան հարկավոր չեն կլասիկները, նրան տվեք հրացան, նրան սովորեցրեք կրակել:

Ֆաշիստական բարբարոսութեան պատկերը լրացնելու համար եր կարծես վոր կոնգրեսում հանդես յեկավ գերմանական հեղափոխական ծրարտյալ մի դրող, վորի սև ու մեծ ակնոցները, վորի խորհրդավոր անհայտացումը կոնգրեսից այն պահին, յերբ հաղարավոր ձեռներ ծափահարում եին նրան և նրա միջոցով ընդհատակ քշված հեղափոխական գրականութեանը, կոնգրեսի անմոռանալի դրվագները մեկն և մնում: Նա, այդ սև ու խոշոր ակնոցներ-

րով խորհրդավոր մարդը, կոնգրեսին և նրա միջոցով ամբողջ աշխարհին պատմեց Հիտլերյան Գերմանիայի սարսափների մասին: Նա պատմեց թե ինչպես Փաշխտական վոտսիկանները յեթե վորեիցե բնակարանում լսում են զբամեքենայի չըլիչիկոց, անմիջապես ներս են խուժում բնակարանը, խառնում են զբամեքենայի թղթերը՝ տեսնելու համար թե ի՞նչ են տպում և ու՞մ համար: «Այսպիսի պայմաններում, — հայտարարեց սև ակնոցներով անծանոթը, — մեր կողմից զբված յուրաքանչյուր տողը, պահվող կամ ընթերցողին տրվող յուրաքանչյուր թերթիկը հանդիսանում է մեր ազատությանը և մեր կյանքին սպառնացող վտանգի աղբյուր»: «Յես չեմ կարող ավելի մանրամասն պատմել ձեզ, — շարունակում է սև ակնոցներով անծանոթը, — Հիտլերյան Գերմանիայի սարսափների մասին, այդ մասին կխոսեն այն յերեք վեպերի և 50 պատմվածքների ձեռագրերը, վորոնք մեր հակաֆաշիստա-

կան խմբակն ուղարկել ե ինձ հետ»: Հակամարդկային, դաժան պայմաններում, ընդհատակում, աճում և ամբանում է գերմանական հեղափոխական, հակաֆաշիստական զբաղանությունը: Հիտլերյան հուրն ու կացինը չեն կարող ընկճել գերմանական ժողովուրդի ազատ ապագայի համար պայքարող մարտիկների արի վոգին: Գերմանական ժողովուրդը, գերման պրոլետարիատը և հեղափոխական մտավորականներն իրենց ծրույալ ներկայացուցչի միջոցով ի լուր ամբողջ աշխարհի հայտարարեցին, վոր Գերմանիան՝ դա դեռ Հիտլերը չէ և գերմանական ժողովրդի Իսկական դեմքը այն չէ, ինչ վարցույց է տալիս ֆաշիստական մամուլը»:

Ընկերներ

Գերմանիան յեղել է փրկստոփայության, պրեզիայի և դահիճների յերկիր: Ներկայումս այնտեղ իշխում են դահիճներն ու դահճային «փրկստոփայությունը»: Այնտեղ կացինը հանդիսանում է «կուլտուրայի» վեր-

Ղին խոսքը: Սակայն գերմանական
ժողովուրդը, գերմանական մարտա-
կան պրոլետարիատը յերկար չի կա-
րող հանդուրժել կացնի և սև սվաս-
տիկայի տիրապետութունը: Այդ
տիրապետության դեմ ուղղված պայ-
քարում, գերմանական ժողովուրդի
հետ և ամբողջ աշխարհի աշխատա-
վոր մասսաների առաջավոր մտավու-
րականության սերն ու համակրանքը:

Ահավասիկ այսպիսի պայմաննե-
րում, միանգամայն պարզ և թե ին-
չու կոնգրեսի բոլոր պատգամավորնե-
րը, չնայած իրենց քաղաքական հա-
մոզմունքի տարբերության, սկսած
կաթոլիկ գրող Բենդայից մինչև սև
ակնոցավոր այն պատվիրակը, ի-
րենց նողկանքի ու ատելության խոս-
քըն ուղղեցին Փաշչեմի դեմ. հուշա-
կավոր Անդրե ժիդը, ի լուր ամբողջ
աշխարհի հայտարարեց, թե. — «կուլ-
տուրայի թշնամիները հանդիսանում
են հիտլերյան Փաշխտները և իմ
երկրի նացիոնալիստները:

Իսկ գերմանական հուշակավոր գը-
րող Հենրիխ Մաննը, վորին կոնգր-

րեսն ընդունեց փոթորկալից ուվա-
ցիաներով, — խոսելով գերմանական
Փաշխտների մասին՝ հայտարարեց՝
«Այդ մարդիկ պայքարում են այն
ամենի դեմ՝ ինչ հանդիսանում և
մարդկային մտքի լավագույն արժե-
քը՝ ստեղծված վերջին շրջանում:
Նրանք ցանկանում են տապալել և
վոչնչացնել մարքսիզմը, սակայն
մարքսիզմը անմեքսիստի յե հիմար-
ների համար և մտտ և այն ժամանա-
կը, յերբ մարքսիզմը կը տապալի
հիմարների տիրապետութունը»:
«Գերմանիայում, — շարունակում և
Հ. Մաննը, — համաշխարհային անուն
ունեցող դիտականները վոնդվում
են պաշտոնից և նրանց գրքերն այր-
վում են, իսկ նրանց տեղ նստեցը-
նում են տկարամիտ, անգրագետ չի
նովնիկներ՝ Փաշխտական ապարա-
տից»:

Յերկու փաստ չափազանց հատկա-
նշական և ցույց տալու Փաշխտա-
կան Գերմանիայի դիրքը հանդեպ
կոնգրեսը: Նախ վոր կոնգրեսի 23
դերմանացի պատգամավորներից և



վոչ մեկը լեգալ կերպով կոնգրես
չեր յեկել Գերմանիայից: Նրանք
կամ եմիգրացիայի մեջ գտնվող դը-
րողներ եյին և կամ թե յեկել եյին
ծպտյալ և անլեգալ կերպով: Յեր-
կրորդ փաստն այն է, վոր դերմա-
նական մամուլը կոնգրեսի վողջ ըն-
թացքում և վոչ մի տող չգրեց կոն-
գրեսի մասին: Այդ ինքնին ցույց է
տալիս թե կոնգրեսում վորքան ու-
ժեղ եր հակաֆաշիստական պայքարի
միացյալ ճակատը և թե վորքան
եյին վախենում դերմանական ֆա-
շիստներն այդ ճակատից:

Այսպիսով կոնգրեսի առաջին և
հիմնական արդյունքն այն է, վոր
նա կարողացավ մարդկային առաջա-
վոր մտքի բոլոր լավագույնն անրկա-
յացուցիչներին, կուլտուրայի վար-
պետներին կազմակերպված կերպով
դուրս բերել մարդկության բարորո-
ւթյանն ու կուլտուրային սպառնացող
ֆաշիզմի դեմ:

Ընկերներ.

Խոսելով ֆաշիզմի մասին, յես չեմ

կարող մի քանի խոսքով կանգ չառ-
նել հայ ֆաշիստների վրա: Նրանք,
հիտլերյան գաղափարների այդ նա-
խահարապետները, միշտ ել յեղել
են համաշխարհային ռեակցիայի ա-
մենասե ուժերի առաջին շարքերում:
Բավական եր, վոր Գերմանիայում
հաղթանակեր ցեղաբանական ֆա-
շիզմը, վորպեսզի նրանք Բեռլինի
դռների առաջ խաղացնեյին իրենց
հավատարիմ պոչը, վորպեսզի նը-
րանք իսկույն հրնայարակ դային
կազմակերպելու իրենց «ցեղակրոն-
ների շարժումը» հիտլերյան վերջին
մողայով, աքաղաղային «սպարա-
պետ» Նոդեհի «տեսական» ձեակեր-
պումներով և նրա ընդհանուր ղեկա-
վարությամբ:

Հիտլերյան Գերմանիան նույնպես
չուչացավ նկատելու, վոր հանձին
դաշնակիցների նա ունի իր հավատա-
րիմ պնակակիցները, վորոնց մի քա-
նի կտոր վոսկոր չպրտելով և նը-
րանց «արիական ծագումը» մեծա-
րելով, կարելի կլինի հարկավոր դեպ
քում թնդանոթի համար եժան միս

հայթայթել՝ ի հաշիվ հայ ժողովուրդի, վորը բարեբախտաբար արդեն շատ լավ ծանոթ է հայ ֆաշիստների վոնրապարտ գործունեյությանը:

Գերմանական և հայկական ֆաշիզմի միացյալ դործունեյությանը ներկա ետապում նպատում է այսպես կոչված «Հայ գերմանական ընկերությունը» Բեռլինում, վոր վերջերս հրատարակ է հանել մի ժողովածու՝ «Հայություն - արիականություն» վերնագրով: Այդ ժողովածուն, վորն աշխատասիրել են դաշնակ «դոկտոր» Արտ. Արեղյանը, քարոզիչ Լիցենցիանտ Բլինկերը, դոկտոր Փոն-Լեերսը և բազմաթիվ ուրիշներ, — հետապնդում է հետևյալ նպատակները, —

ա) Ապացուցել, վոր հայերն արիական ծագում ունեն և հետևաբար պետք է ընթանան «արիականության պաշտպանության» այն դրոշի ներքո, վորի կրողն է հանդիսանում Ադոլֆ Հիտլերը: բ) Ինչպես դրում է դոկտ. Փոն Լեերսը, ապացուցել, վոր «հայ ժողովուրդի վողբերգու-

թյունը հետևանք է նրա արիական ծագմանը» և հետևաբար նա այդ վողբերգության վրեժը պետք է լուծի համախմբվելով Հիտլերի արիական բանակի շարքերում: Յերրորդ խիստ կարևոր նպատակը ձեվակերպում է պրոֆեսոր Շեֆֆերը: Իր «Արևմտյան քաղաքակիրթ աշխարհը և հայերը» հոդվածում, ֆաշիստ պրոֆեսորն արձանագրում է, վոր «Հայ դադթաշխարհը պետք է պահպանի իրեն. այդ բանն անհրաժեշտ է յերկու պատճառով, ա) վորովհետև հայ ժողովուրդի պատմությունն ինքնին վկայում է իր անխախտ կենսունակությունը. բ) վորովհետև հայ ժողովուրդի առջև դրված կան դեռ այնպիսի խնդիրներ, վոր ապագային պիտի լուծվեն, յեթե անգամ նա (հայ ժողովուրդը. Ա.) այդ ամենը այստոր մինչև իսկ չի տեսնում իր աչքերով»:

Ինչպես տեսնում եք, ընկերներ, հիտլերյան պրոֆեսորը հայ ժողովուրդի առաջ «հեռանկարներ» է բացում և հորդոր կարդում պահպանել

լու հայ գաղթաշխարհի միասնու-
թյունը, վորպէս թնդանոթային ա-
մենաեթան միս ոգտապործելու հիւ-
լերյան հակախորհրդային արկածա-
խնդրություններէ համար:

Մակայն մի ուրիշ ավելի հատկա-
նշական փաստ: Վերջերս հայ Փա-
շխաների պարագլուխներէց Սիմոն
Վրացյանը Մարտելում, հանդես յե-
կած իր մի ղեկուցման մեջ այն միտ-
քըն է հայտնում, վոր Փրանս-խորհր
դային համաձայնությունից ամենից
շատ տուժեց հայ ժողովուրդը, վո-
րովհետև այդ համաձայնության շը-
նորհիվ պատերազմը կարող է հետա-
ձգվել, հետևաբար և կհետաձգվի
հայ ժողովուրդի «փրկությունը»:

Ահա վասիկ, ընկերներ, տեսեք թե
վորքան է լիտիացել հայ Փաշխանն
րի կուսակցությունը, վոր նոր պատե-
րազմ է յերազում հայ ժողովուրդի
ղաշնակցական «փրկության» հա-
մար: Կարծեք թե նախորդ իմպերիա
լիստական պատերազմում, այդ
նույն զաշնակցության վոճրադործ
քաղաքականության շնորհիվ մի մի-

լիոն հայության վոչնչացումը դեռ
բավական չէր հագեցնելու զաշնակ-
ների արյունոտ ախորժակը և ներ-
կայումս նրանք, այդ դիշատիչ ցին-
ները կոնչում են նոր պատերազմի,
նոր արյունհեղության մասին:

Մակայն դուր են փորձում դաշ-
նակները մոլորեցնել արտասահմանի
հայ աշխատավորությանը: Փարի-
զում յեղած ժամանակամիջոցում յես
չփում ունեցա Փրանսահայ աշխա-
տավորության լայն դանդախածներէ
և մտավորականության այլ և այլ
ներկայացուցիչներէ հետ և ականա-
տես յեղա այն բուռն առելությանը,
վոր կա նրանց շրջանում հանդես
հայ Փաշխանների կուսակցության:
Յես տեսա նաև այն մեծ, անսահման
սերը, այն բուռն խանդավառությու-
նը, վոր կա դեպի Սորհրդային Հա-
յաստանը, դեպի նրա սոցիալիստա-
կան շինարարության հոյակապ վե-
րելքը, դեպի նրա կուլտուրան ու
գրականությունը: Պիտի արձանադը-
րել, վոր չափազանց մեծ հետաքրքը-
րություն կա դեպի Սորհ. Հայաս-

տանը նաև Փրանսիական գրողներին
և մտավորականների կողմից: Այդ
հետաքրքրութունն առանձնապես
ստեղծված է այլ և այլ ժամանակ-
ներում մեր յերկիրն այցելած այն-
պիսի նշանավոր գրողների կողմից,
վորպիսիքն են Հանրի Բարբյուսը,
Ժան-Րիշար Բլոկը, Լեոն Մուսիմս-
կը և ուրիշներ:

Յես գիտեմ, ընկերներ՛ր, խոսելով
Փրանսահայ մտավորականութան
մասին, ձեզ բոլորիդ ամենից շատ կը
հետաքրքրի տեղեկանալ թե ի՞նչ է
անում մեր խոշորագույն բանա-
ստեղծ Ավետիք Խառակյանը: Փա-
րիզում Իսահակյանին յես հանդիպե-
ցի բազմաթիվ առիթներով: Յես
նրան գտա չափազանց առույգ, կեն
սախինդ տրամադրությամբ: Ինչպես
արտասահմանում յեղած վերջին տա-
րիների ընթացքում, նույնպես և
ներկայումս, նա ազնվորեն կանգնած
է խորհրդային Հայաստանի բարե-
կամների և պաշտպանների առաջին
շարքերում: Նա ակտիվորեն պայքա-
րում է խորհ. Հայաստանի բոլոր

թշնամիների և առաջին հերթին
գաշնակցության դեմ: Նա պատրաստ
վում է մշտապես վերադառնալ
Խորհրդային Հայաստան և նվիրվել
յերկրի սոցիալիստական շինարարու-
թյան մեծ գործին: Կարող եմ ձեզ
տեղեկացնել, վոր ամենից շատ 2-3
ամսից հետո, մենք առիթ կունե-
նանք մեր մեծագույն բանաստեղծին
ու ազնիվ քաղաքացուն վողջունել
Խորհրդային Հայաստանի հողի վը-
րա:

II

ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՄԻԱԿ ՈՐՐԱՆԸ

Ընկերներ՛ր.

Կոնգրեսի ջննարկման առարկա
յեղող կարևոր հարցերից մեկն էր
կուլտուրայի ժառանգության խնդի-
րը: Այս հարցի առթիվ խոսեցին ան
զլիական գրող Ֆորստերը, Փրան-
սիական գրող Բենդան, գերմանա-
կան գրող Եգոն Երվին Կրշը: Սա-

կայն այս հարցերի առթիվ տրված
ամենալուրջ և բովանդակալից զե-
կուցումը հանդիսացավ խորհրդային
պատգամավոր ընկ. Լուսպալի ղեկու-
ցումը:

«Խուրժուղիան կորցրել է կուլ-
տուրական ժառանգության իրա-
վունքը,— հայտարարեց Լուսպ-
ալը.— նա անարժան է դրան:
Նրա միակ ժառանգորդը, ըստ
պատմական իրախուսի՝ հանդի-
սանում է նոր կուլտուրայի ըս-
տեղծողը՝ բանվոր դասակարգը»:

Յեւ խկապես, այն պահին, յերբ
կապիտալիզմը խարույկ է հանում
անցյալի կուլտուրայի լավագույն
արժեքները, յերբ բեմերից ցած են
իջեցվում մեծանուն կլասիկները,
յերբ՝ ինչպես հայտարարեց Յգոն
Երվին Կիշը— «Ֆաշիզմը գրականու-
թյունը հրում է դեպի այլասերման
գիրկը», յերբ «վոստիկանական ղե-
ղին վեպը, պոռավել կամ նյաղ ան-
էկեղծ պոռնոգրաֆիան ամբիւի և ամի-
լի քաղաքացիության իրավունքներ
են ձեռք բերում»,— այսպիսի պայ-

մաններում եւ ԽՍՀ Խոսք կարող է
լինել բուրժուազիայի կողմից կուլ-
տուրական արժեքները պահպանելու
և ժառանգելու մասին: Սյդ է պատ-
ճառը, վոր ընկեր Լուսպալի միանգա-
մայն ուշադրով և պատմականորեն
ճշմարիտ գրույթին միացան կոնգ-
րեսի այլ և այլ յերկրներին բաղմա-
թիվ պատգամավորները: Փրանսիա-
կան նշանավոր գրող և «Ռոպ» ժուր-
նալի խմբագիր Ժան Գեյնոն խոսելով
կուլտուրական ժառանգության մա-
սին է միջի այլոց հայտարարեց.—

«ԽՍՀՄ-ն վոչ միայն նոր կուլ-
տուրա՝ յե ստեղծում, այլ և
մարդկության պատմության բո-
վանդակ ժառանգն է հանդիսա-
նում:

Մորհրդային կուլտուրայի ա-
սանձնահատկությունն այն է,—
շարունակում է Գեյնոն,— վոր
նրա գործիչները վոչ միայն
կուլտուրայի մասնագետներ՝
գրողներ և գիտնականներ են,
այլ և բանվորներ, տեխնիկներ,
բնակչության այն հակայական

մասսաները, վորոնք կապիտա-
լիստական պայմաններում ապ-
րում են հարկադրական տգիտու-
թյան մեջ»:

Նույն հարցի մասին հանդես գա-
լով Ֆրանսիական սիմբոլիկ գրական-
նության նախահայր Դյու ժեբրդանը
հայտարարեց, —

«Քուրժուաղիան փչացրել է
իր կուլտուրական ժառանգու-
թյունը: Նրա դրականությունը
և դպրոցները դաստիարակում
են մանր, ինքնասիրահար բուր-
ժուայի տիպ: Միմիայն խորիք-
դային Միությունը կարողացավ
ազատագրել քնակչության մաս-
սաները տգիտությունից և կա-
րողացավ նրանց համար ֆանա-
սյարհ հարթել դեպի կուլտու-
րան: Միմիայն ԽՍՀՄ-ն կարող
է իրավամբ իրեն համարել ան-
ցյալ կուլտուրական հարստու-
թյունների իսկական ժառանգը»:

Սակայն ԽՍՀՄ-ն վոչ միայն հան-
դիսանում է անցյալի կուլտուրա-
կան բոլոր լավագույն արժեքների

որինական ժառանգը, նա վոչ միայն
հանդիսանում է այդ կուլտուրայի
ճշմարիտ մեկնաբանողն ու մասսա-
յականացնողը, — այլև նա հանդիսա-
նում է նոր կուլտուրայի ստեղծ-
ման միակ որրանը, մի կուլտուրա-
յի, վորն իր հիմքում ունի անցյա-
լի լավագույն արժեքների արադի-
ցիաներ, մի կուլտուրայի, վորը տո
գորված ու ամբողջովին համակված
է կոմունիզմի վոգույ, ՄՍՐՔՍԻ,
ԵՆԳԵԼՍԻ, ԼԵՆԻՆԻ, ՍՏՍՍԼԻՆԻ մեծ
ուսմունքի վոգույ, մի կուլտուրայի,
վորը պայքարում է մարդու ձեռքով
մարդուն շահագործելու դեմ, վորը
պայքարում է ախատավոր համայն
մարդկության անդասակարգ, յերջա
նիկ ապագայի համար:

Յեվ կոնգրեսի բազմաթիվ ու բազ
մազգի պատգամախորները միաբե-
րան արձանագրում էին պատմական
այն ճշմարիտ փաստը, վոր միայն
և միմիայն կոմունիզմը կարող է փըլ-
կել մարդկային կուլտուրայի լավա-
գույն արժեքները: Այսպես որինակ
հոլանդական գրող ժեֆ Լատոն իր

յելույթում արձանագրեց, վոր—
«Կամուսիքմը և կույտուրան իրարից
անբաժանելի յեն, ինչպես ֆաշիստը
բարբարոսությունից և պատերազ-
մից»:

Աշխարհի մեկ վեցերորդ մասում
հերոսաբար սոցիալիզմ կառուցող
պրոլետարիատը վոչ միայն կերտում
է իր մեծ, համամարդկային բարձր
գաղափարների կուլտուրան, այլ և
խթան է հանդիսանում, ուժ ու կո-
րով է ներշնչում կապիտալիստական
յերկրները հեղափոխական գրողնե-
րին: Այս մասին պերճախոս կերպով
հայտարարեց դանիական նշանավոր
գրողուհի Կարին Միխայիսը,—

«Խորհրդային Միությունը,—
ասաց նա, — համաշխարհային
նոր կուլտուրայի իսկական հայ-
րենիքը, յեվրոպական գրակա-
նության և գիտության լավա-
գուն մշակներին տալիս է հա-
վատք, ուժ և յեռանդ, այն պայ-
քարում, վոր մղում են նրանք
ամբողջ աշխարհին սպառնացող

Փաշիստական բարբարոսության
դեմ»:

Այս ամենից հետո միանգամայն
պարզ է, ընկերներե՛ր, թե ինչպիսի
մեծ, անհուն սիրով կոնգրեսի հա-
մարյա բոլոր պատգամավորները
հայացքներն ուղղված էյին դեպի
մեր Խորհրդային հայրենիքը, դեպի
համայն աշխարհի պրոլետարիատի
կարմիր մայրաքաղաքը, նոր մտքի,
նոր պատմության ստեղծագործման
հրաբորբոք ոջախը, դեպի մեր ան-
խորտակելի միջնաբերդը, ուր հա-
վետ հանդչում է մարդկության մե-
ծագունյն առաջնորդի աճյունը և ուր
բարձրացած նրա հանճարեղ հաջոր-
դի պողպատե ձեռքը նոր կուլտուրա
յի, նոր պատմության ուղին է դը-
ծում:

Այս ամենից հետո միանգամայն
հասկանալի յե այն բացառիկ հետա-
քրքրության մթնոլորտը, վորով շքր
ջապատված էր խորհրդային պատ-
գամավորությունը: Նրան ունկն-
դրում էյին լարված, բացառիկ ու-
շադրություններ: Նրան ընդունում է-

յին ինչ վոր առանձնահատուկ հարգանքով, կարծես թե խոսողները վնջ թե սովորական մարդիկ էյին, սովորական գրողներ, այլ ինչ վոր մարգարեներ, վորոնց բերանով խոսում էր սրբազան ճամարտությունը, մարդկության յերջանիկ ապագայի ճշգրիտ ուղենշումը:

Այս պայմաններումն էր ահա, վոր կոմունիզմի և նրա հայրենիքի դեմ վարկարեկիչ յելույթի փորձ անող մի զույգ արոցկիստներն արժանացան ընդհանուրի հակահարվածին ու նողկանքին:

Ի պատասխան պարոնայք արոցկիստների հակախորհրդային զրպարտությունների, կոնգրեսի բազմաթիվ պատվիրակների հետ միասին յելույթ ունեցավ նաև Անդրե Թիդը, վորն ի հեճուկս արոցկիստների ի միջի այլոց հայտարարեց, — «Թող խորհրդային Միությունն իմանա, վոր մեր վստահությունը դեպի նա աներեր է, և վոր այդ վստահությունը հանդիսանում է դեպի նա (խորհրդային Միությունը. Ա.) ու-

նեցած մեր սիրո արտահայտությունը»:

Կոնգրեսում կարմիր գծով ընդգծվեց այն հանգամանքը, վոր Կուլտուրայի պաշտպանուրյան և գարգացման միակ ուրանը սոցիալիզմի էայրենիքն է, հարերդային Միությունը: Յեւ ինչպես հայտարարեց պատգամավորները մեկը, — «Կոնգրեսում տեղի ունեցավ խՍՀՄ-ի վերջնական դը-յուրե ճանաչումը կուլտուրայի ասպարեղում»: Բոլոր նրանք, ովքեր փորձ կանեն հարձակվել հարերդային Միության վրա, նրանք դրանով հարձակվում են մարդկային վող կուլտուրայի վրա:

Ահա, ընկերներ, կուլտուրայի պաշտպանության կոնգրեսի յերկրորդ կարևորագույն արդյունքն ու արժեքը:

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ
ՀԱՂԹԱԿԱՆ ԴՐՍԵՐ

Ընկերներ.

Կոնգրեսի մյուս կարևորագույն հարցերից ելին հումանիզմի և անհատի ու հասարակութայն փոխհարաբերութիւնի հարցերը:

Իմ գեկուցման հատկապէս առաջին մասում բերված փաստերից հետո ել ի՞նչ խոսք կարող ե լինել բուրժուական հումանիզմի մասին: Գերմանիայում, վերպէս պատժի «նուրբ» միջոց, ղեկըետով ընդունվում ե կացինը և դեռ բուրժուական շաղակըբատները խոսում են հումանիզմի մասին: Յեյլոն կղզում, կապիտալիստական պլանտացիաներում, քաղցի, ստրկութիւն և համաճարակի ճիրաններում մեռնում են հարյուրավոր և հազարավոր մարդիկ և դեռ շաղակըբատում են հումանիզմի մասին, ևլեկտրական թիկնաթուղի վրա, լինչահարման սարսափներում մեռնում

են գունամորթ սարուկների և հեղափոխական մարտիկների բազմութիւններ և դեռ մարդիկ խոսում են հումանիզմի մասին: Կապիտալիստական հանրակարգի պայմաններում մարդկային արժանապատվութիւնը ցեխի յե հավասարվում և դեռ մարդիկ բուրժուական հումանիզմի մշուշով են պատսպարում իրենց տեսողութիւնը, վորպէսզի ախանատես չլինեն այնպիսի ցնցող փաստերի, յերբ անգործ և մեծանուն պրոֆեսորները մուրացիանութիւն են անում, յերբ տաղանդավոր անգործ նկարիչները, հենց մեր, կոնգրեսի պատգամավորներին աչքի առաջ, Փարիզի կաֆեներում պոռնիկատան տոմսեր ելին վաճառում, այդ ստոր պաշտոնի համար ստանալով վաճառված տոմսերի արժեքի 10%-ը, յերբ Փարիզի մետրոն կտրում ե գործազուրկ բանվորների կյանքի և հույսի վերջին թելը: Բուրժուական հումանիզմի «յերջանիկ» Ամուրը վաղուց ի վեր զառամել և հաշմանդամ ե դարձել: Տիրականորեն հրապարակ ե իջել պրոլետարա-

կան հումանիզմը, վորի հաղթական
դրոշը ծածանելում եր կուրտուրայի
պաշտպանության միջազգային կոնգ
րեսում :

«Նորհրդային հումանիզմը,—
գրում է «Պրավդան» իր խմբագրա
կանում,— անունից ազատ վոչինչ
ընդհանուր չունի բուրժուազիայի
պատմական հումանիզմի հետ : Իս
կական հումանիզմը՝ դա պրոլետա-
րական հումանիզմն է» :

Իսկ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին
կոնգրեսին ուղղած իր հեռագիր-վոզ-
ջույնի մեջ արձանագրում է, վոր—
«Աշխարհում միայն մի դասակարգ
կա, վորը կարողանում է հասկանալ
և գգալ հումանիզմի համաշխարհա-
յին, համամարդկային նշանակա-
թյունը, այդ դասակարգը — պրոլե-
տարիան է» :

Ոոսելով մարդկային իրավունքի և
ազատության մասին՝ իր հայրենի-
քում,— անգլիական սահմանադրու-
կան բուրժուա գրող Ֆորստերը
հայտարարեց կոնգրեսում,—

«Ազատությունն այնտեղ սպի-

տակ և հարուստ մարդկանց արտո-
նությունն է : Այն գործազուրկը,
վորն ապրում է չքավորության
մեջ, չի իմանում թե ինչ է անգ-
լիական «ազատությունը» : Հնդիկ-
ներն անգլիացիներին հետ համահա-
վասար ազատություն չեն վայի-
լում» :

Մպիտակ ցեղի կողմից դունամորթ
ցեղերի ստրկացման և շահագործման
մասին կան բազմաթիվ և բազմապի-
սի փաստեր : Գերմանական Փաշիգ-
մի տեսաբաններից Շպենգլերն իր՝
«Մարդն և տեխնիկան» գրքում կը-
տամբում է յեվրոպացիներին այն բա-
նում, թե նրանք 19-րդ դարում ա-
մենամեծ սխալը դործեցին «գոնալոյր
ցեղերին» տալով իրենց զիտությունը
և տեխնիկան, վորովհետև այդ բա-
նը սկսում է խանդարել նրանց ավե-
լի վայրադ ձևերով շահագործմանը :

«Դարերի ընթացքում ժանտախտը
նորմալ յերևույթ էր,— գրում է Ա.
Մ. Գորկին իր հոդվածներից մե-
կում,— բայց ժանտախտը գրեթե ան
հետացավ և հիմա յերկրի վրա նրա

դերը կատարում է բուրժուազիան,
նա թունավորում է ամբողջ գունա-
վոր մարդկությունը՝ սրսկելով նրա
մեջ խորին ատելություն և արհա-
մարհանք դեպի ամբողջ սպիտակ ցե-
ղը»:

Այս Փոնի վրա միանգամայն
պարզ է, թե վորքան պայծառ, վոր
քան հողթական է ծածանում խոր-
հրդային հումանիզմի դրոշմը, վորը
մենք հպարտորեն բարձրացնում ենք
ամբողջ աշխարհի վրա: Այս Փոնի
վրա է, վոր կրկնակի, յեռակի արժեք
է ստանում ստալինյան հոգատարու-
թյունը դեպի մարդը, դեպի նրա
քարգացումն ու աճը, դեպի նրա
կուլտուրականացումը: Միանգա-
այն իրավացի յեր Փրանսիացի գրող
Գեյնոն, յերը իր յելույթում հայ-
ասարարեց թե, - «Մարդկության ար-
ժանապատվության գագառմն արուս
սովոր բարձրության վրա յե դրված
խորհրդային Միության միջ»:

Ընկերներ,

Հումանիզմի հարցի հետ հարակց-

վում է անհատի և հասարակության
փոխհարաբերության հարցը:

Այն պահին, յերը կապիտալիստ
կան հասարակության մեջ անհատի
ընդունակություններն ու հնարա-
յութությունները կրնակելու են ար-
վում, յերը գրողը հասնում է մինչև
ճաշարանի մատուցողի աստիճանին,
յերը տաղանդավոր ջութակահարը
յերգով մուրացկանություն է ա-
նում, յերը բաղմաթիվ գործազուրկ
մտավորականներ ինքնասպանու-
թյամբ են փակում իրենց կյանքի
դառն հաշիվները կապիտալիստա-
կան աշխարհի հետ, յերը բուրժուա
կան հասարակությունը դաժան գե-
րեզմանավոր է դառնում անհատի
համար, - այդ պայմաններում ահա,
սոցիալիզմի հայրենիքում, կոմու-
նիստական հասարակության մեջ
անհատը ստանում է բազմակողմանի
գարգանալու բոլոր հնարավորու-
թյունները: Յեթե բուրժուական հա-
սարակության մեջ տաղանդավոր
անհատը գրողը կամ գիտնականը
դառնում է սևագործ, մատուցող,

կամ մուրացկան, ապա մեզ մոտ,
կոմունիստական հասարակութեան
մեջ, կոչելի մաքրողը դառնում է
մեծանուն գիտնական, սեւագործ բան
վորը՝ դերասան, բարակը՝ գրող,
խոհարարուհին, ճարտարադիտուհի,
և այլն և այլն: Ահա թե վորն է ան-
հատի և հասարակութեան փոխհա-
րաբերութիւնը կապիտալիզմի և կո-
մունիզմի աշխարհում:

Արձանադրված և ապացուցված է
այն հանգամանքը, վոր անհատը կա-
րող է բազմակողմանիորեն դարգանալ
միայն և միմիայն կոլեկտիվի հետ
միասին: Մենք ունենք այդ հրաշալի,
յես կասեյի հրաշագործ կոլեկտիվը,
վորից ընդմիջ դրկված է կապիտա-
լիստական հասարակութեան մեջ ապ-
րող անհատը:

Այսպիսով ընկերներ, կոնդրեսի
մյուս կարեւոր արդյունքն այն յեղով,
վոր մի անգամ ևս արձանադրվեց
այն փաստը, վոր բուրժուական հու-
մանիզմը դարձել է արդեն դատարկ
ֆրագ, վոր համամարդկային բարձր

գաղափարների միակ կրողը պրոլետա-
րական հումանիզմն է, վորին է պատ-
կանում ներկան և ապագան: Մյուս
կողմից արձանագրվեց, վոր կապի-
տալիստական հասարակութեանը բու-
ցարձակորեն արգելակում է անհատի
զարգացման ամեն մի հնարավորու-
թիւն, այն ինչ մեզ մոտ կոմունիս-
տական հասարակութեանն ստեղծել
է անհատի բազմակողմանի զարգաց-
ման բոլոր հնարավորութիւնները:

Այս հարցում ևս, ինչպես նախըն-
թաց բոլոր հարցերում, կապիտալիս-
տական սիստեմը ֆիասկոյի համ-
դիպեց:

VI

ԼԵՆԻՆՅԱՆ - ՍՍՍՐԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՁՈՐ ՑՈՒՅՑԸ

Ընկերներ,

Կոնդրեսի հիմնական հարցերից մե-
կըն էր «ազդեցութիւն և կուլտուրա»
հարցը, վորի մասին բովանդակալից
գեկուցումով հանդես յեկավ Հանրի
Բարբյուսը:

Այն պահին յերբ կապիտալիստական սիստեմի պայմաններում տիրապետված ազգութիւնները, կորցնում են անգամ իրենց Ֆիզիկական գոյութեան իրավունքը: Եւ ի՞նչ խոսք կարող ե լինել նրանց կուլտուրայի մասին: Յերբ Գերմանիայում վոչ արիական ծագում ունեցողներին սպառնում ե Հիտլերի կողմից զեկրետափորված Ֆիզիկական ջարդը, յերբ Յրանսիայում ե բողոքակից այլ յեր կըրներում գործարաններից, կուլտուրական հիմնարկներից, բոլոր տեղերից դուրս են չպրտվում ե սովամահութեան գիրկը նետվում բոլոր ալլազիները՝ բացի Փրանսիացիներից, այս պայմաններում եւ ի՞նչ խոսք կարող ե լինել փոքր ժողովուրդների ազգային կուլտուրայի մասին: Բուրժուական ազգայնականութեանը վտնահարում, վոչնչացնում ե ազգային կուլտուրայի յարաբանչուր սաղմը: Նա, բուրժուական ազգայնականութեանը տենդագիւն կերպով պատրաստվում ե թունավոր գազերի ե արյան մեջ խեղդելու վոչ միայն ազ-

գային կուլտուրաները, այլ ե այն ըստեղծող ազգերը:

Ահա թե ինչու միանգամայն իրավացի յեր Հանրի Բարբյուսը, յերբ իր զեկուցման մեջ արձանագրեց,—

«... Նայեցեք սակայն մյուս յեր կերը. այդ աշխարհի մեկ վեցերորդ մասն ե. նրա սոցիալական վերածնունդը տեղի ունեցավ նացիտնալիզմին հակադրվող արժեքների նշանաբանի յակ: Այդ յերկրում հոչակվեց մարդկութեան արժեքը, նրա աշխատանքը: Մենք այնտեղ տեսնում ենք բոլոր ազգային կուլտուրաների տոնն ու հաղթանակը»:

Միանգամայն պարզ ե, ընկերներ, թե այս Փոնի վրա, վորքան հուժկու պիտի հնչեր Մորհրդային Միութեան ազգային կուլտուրաների հոյակապ նվաճումների հանրագումարը, վորն արին Ուկրայնայի, Բելոուսիայի, վրաստանի, Հայաստանի ե Միջին Ասիայի պատգամավորները: Նրանց ձայնը հնչեց վորպես յերբեմնի տիրապետված ե համեմա

տարար փոքր ժողովուրդների ազատութեան և ազգային կուլտուրայի հաղթանակի հզոր յերդ: Նրանց յելուցիցները Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականութեան հաղթանակները վիթխարի ցուցցի վերածվեցին: Միայն այդ հանճարեղ քաղաքականութեան շնորհիվ էր, վոր փոքրիկ Հայաստանը հավասար իրավունքով մտավ կուլտուրայի պաշտպանութեան միջազգային կոնգրես, քննարկելու համաշխարհային պատմական նշանակութիւն ունեցող խնդիրներ: Միայն այդ քաղաքականութեան շնորհիվ էր, վոր կոնգրեսում, համաշխարհային մեծահանճար կլասիկների հետ մեկտեղ հպարտութեամբ հնչեցին Տարա Շէշենկոյի, Եոթա Ռուսթավելու, Հովհաննես Թումանյանի, Հակոբ Պարոնյանի հանճարեղ անունները:

Կոնգրեսում ունեցած իմ յելուցիքում յետ ի միջի այլոց հայտարարեցի, — «Հայաստանի յորհրդային գրականութիւնը փոքր ժողովրդի,

բայց մեծ գաղափարների գրականութիւն է»:

Ընկերների, այդ մեծ գաղափարները մեր գրականութեանը տվեց Հոկտեմբերյան հեղափոխութիւնը, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականութիւնը, այդ քաղաքականութեան շնորհիվ յարձրացավ մեր ձեռք ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական գրականութեան ու կուլտուրայի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԿԸՇԻՌՆ ՈՒ ԱՐԺԵՔԸ: Այդ քաղաքականութեան շնորհիվ մեր գրականութիւնը և կուլտուրան ստացան անելու և զարգանալու պետականորեն ապահովված ու պաշտպանված բոլոր հնարավորութիւնները:

Ահա թե ինչու, մենք, խորհրդային Հայաստանի գրողներս ու արվեստագետներս վոչ միայն մեր գրիչըն ու միտքը, այլև մեր արդունքներն տրամադրել պաշտպանելու համար Հոկտեմբերյան հեղափոխութեան, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականութեան բոլոր նվա-

նումները: Յեկ բշոր նրանք, ովքեր փորձ կանեն խաւնգարել կամ կանցնել այդ նվաճումները, նրանք կարժանանան մեր կազմակերպված միասնական ջանքախիչ հակահարվածին:

Ընկերներ, այսպիսով կոնգրեսի մյուս կարևոր արդյունքն ու նվաճումն այդ՝ յեմիկոնա-ստալինյան ազգային քաղաքականութեան հզոր դեմոնստրացիան էր:

Ընկերներ,

Խիստ մեծ են կոնգրեսի նվաճումները նաև կազմակերպչական հարցի ասպարիզում: Ինչպես գիտեք, կոնգրեսը հիմնադրեց գրողներին միջազգային ասոցիացիա, չափազանց հեղինակավոր նախագահութեամբ, ուր մտնում են այնպիսի անուններ, վարպետներ են— Մաքսիմ Գորկի, Ռումեն Ռալլան, Անդրե ժիդ, Հանրի Բարբյուս, Հենրիխ Մանն, Թոմաս Մանն, Բերնարդ Շոու, Ֆորստեր, Սիմոն Լուիս, և ուրիշներ:

Այս ասոցիացիան և նրա ղեկավարութունը պետք է կազմակերպված և սխտեմատիկ պայքար մղեն կուլտուրայի պաշտպանութեան համար, ընդդէմ Փաշլիզի, —ընդդէմ պատերազմի ահռելի վտանգի: Կազմակերպված պայքարի նշանակութունը չափազանց մեծ է՝ լիակատար հաղթանակի համար: Յես դեռ հիշում եմ դանիական գրողուհի կարին Միլսանի խնդրած խոսքերը.—

«Այն, Վոր մենք հավաքվեցինք այստեղ, խոսում ե հողեկան մեծ թափահարման մասին: Մենք կըրկին կայտառ ենք, մենք կըրկին պատրաստ ենք մարտի, մենք կըրկին ուժեղ ենք և առնական: Մտեր մաքար ձեռք տանք իրար և յեղբայրաբար խոստանանք, չգիշել յերբեք, վոչ մի բանի համար չգիշել, թեկուզ ինչ էլ վոր դա արժենա մեզ համար, թեկուզ մեր կյանքն արժենա»:

Յեպ այսպես, 1935 թ. հունիսի 25-ին, կոնգրեսի փակման վերջին

որը, համաշխարհային կուլտուրայի բոլոր առաջավոր վարպետները յեզբայրաբար ձեռք-ձեռքի տվին ապագա մեծ մարտերի համար: Այդ մարտերում նրանց հետ է ճամարտութունը, նրանց հետ է պատմութունը, նրանց է ժպտում ապագան, նրանց հետ է յերկրագնդի աշխատավոր վողջ մարդկության սերն ու համակրանքը:

Այդ մարտերում ծածանվում է կոմունիզմի փրկարար դրոշը: Այդ մարտերում հաղթանակելու յե մեծ ուսուցիչներն՝ ՄՍՐԳՍԻ, ԵՆԳԵԼՍԻ, ԼԵՆԻՆԻ, ՄՍԱԼԻՆԻ անպարտելի ուսմունքը:



84

ՀՀ Ազգային գրադարան




NL0202232

13390

517

№ 1 а.



АЛАЗАН
Итоги Международного Конгресса
защиты культуры
ГИЗ ССРА — Эривань, 1935